ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/212

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2021թ. թիվ 26/26-1/12560-2021 գրությամբ «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 30.07.2021թ. թիվ 09/1148 գրության հիման վրա, 06.08.2021թ. թիվ 26/26-1/12560-2021 գրությամբ նախաձեռնել է «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ն իր գործունեությունը սկսել է 2016 թվականին և արդեն 2017 թվականից մասնակցում ենք տարբեր գնումների մրցույթներին և հիմնականում հետևողական ենք որպիսի խուսափենք անճշտություններից և պահպանենք հավասարության պայմանները:

ԵՊԲՀ առ 30.07.2021թ. թիվ 09/1148 գրությունով ներկայացված ԳՀԱՊՁԲ-2021/11-4-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացքում մեր կողմից բացթողնված վրիպումը տեղի է ունեցել մեր անհետևողականության կամ շտապողականության պատճառով, որի արդյունքում գնորդ ընկերության մասնագետի հարցմանն ի պատասխան՝ սխալմամբ տրամադրվել է 39 լոտով նշված սարքավորման համար ոչ լիարժեք տեղեկատվություն ձեռքբերվող սարքավորման տեխնիկական պահանջների վերաբերյալ:

Հարգելի պարոն Ներսիսյան եթե մենք մտադրություն ունենայինք դիտավորյալ խախտումների ապա կարող էինք նաև տրամադրել պահանջվող տեխնիկական պարամետրերին համապատասխան էլեկտրոնային կայքի հղում տենդերում հաղթող ճանաչվելու համար: Սակայն մենք բարձր ենք գնահատում հավասարության պայմանները, այդ իսկ պատճառով մեր կողմից տրամադրվող էլ. հասցեն ավելի ճշգրիտ էր քան սխալմամբ ներկայացված տեխնիկական բնութագիրը, որի համար հայցում ենք Ձեր ներողամտությունը և պարտավորվում այսուհետ ավելի հետևողական և ուշադիր լինել փաստաթղթերի լրացման ու տրամադրվող տեղեկատվության ճշտության վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ևս մեկ անգամ խնդրում ենք հնարավորինս մեղմ մոտենալ առկա իրավիճակին»:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/212 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.07.2021թ. թիվ 09/1148 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2021 թվականի հուլիսի 8-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2021/11-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով ապրանքների գնման ընթացակարգ: Գնանշման հարցման մասնակիցների թվում հայտ է ներկայացրել նաև «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊ ընկերությունը: Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 15-ի 3-րդ նիստի 3-րդ որոշմամբ, ի թիվս մի շարք այլ մասնակիցների, «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊ ընկերությանը ևս առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը /կցված հայտում բացակայում էր Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը/: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին հուլիսի 16-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում բոլոր մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները: Թեև «Բի Թու ԲԻ Քոնեքշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրն ամբողջությամբ կրկնում էր հրավերի պահանջները, վերջինիս կողմից ներկայացված ապրանքային նշանը հավաստող պաշտոնական կայքի հղմամբ, այդ ապրանքի տեխնիկական բնութագրերը մի շարք բնութագրիչների մասով չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԳՀԱՊ20-2021/11-4-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ 8.10-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 22-ի 4-րդ նիստի 2-րդ որոշմամբ «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊ ընկերության 39-րդ չափաբաժինը մերժվել է՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊ ընկերության տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում «ԳՀԱՊՁԲ-2021/11-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի խնդրահարույց 39-րդ չափաբաժնի՝ գնումների պլանում ներառված լինելու փաստն ապացուցող քաղվածքը, հրավերի տեխնիկական

բնութագրերը պարունակող քաղվածքը /ամբողջական հրավերը տեղադրված է www.gnumner.am կայքում/, ընթացակարգի մասնակից «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած գնանշման հարցմանը մասնակցելու հայտը, «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊ ընկերության շտկված տեխնիկական բնութագիրը և արտադրողի պաշտոնական կայքի տվալները, ընթացակարգի արձանագրությունների պատճեները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/212 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/212 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/212 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2021/11-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ մասնավորապես արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.1-ը և նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը և Ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել է, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված շտկված տեխնիկական բնութագրում 39-րդ չափաբաժնի մասով արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Հրավերի տեխ. բնութագիր	Ներկայացված տեխ. բնութագիր
Սնուցումը եռաֆազ՝ 380 Վ	Սնուցումը միաֆազ՝ 220 Վ
Սառեցման արտադրողականությունը, ոչ պակաս քան 14 ԿՎՏ	Սառեցման արտադրողականությունը, 12.03 ԿՎՏ
Գազի տեսակը՝ R 410A	Գազի տեսակը՝ R 32
Աղմուկի մակարդակը՝ ոչ ավել քան 60Դբ/արտաքին բլոկ/	Աղմուկի մակարդակը՝ 65Դբ /արտաքին բլոկ/
Օգտագործվող խողովակները՝ ոչ պակաս քան 80մ	Օգտագործվող խողովակները՝ 75 մ

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.08.2021թ. թիվ 26/26-1/12560-2021 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 30.07.2021թ. թիվ 09/1148 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2021/212 ընթացակարգի շրջանակներում «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ի ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում

արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն կետի 8.10-րդ ենթակետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված

անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:...

Այսպիսով՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2021/11-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ մասնավորպես արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.1-ը և նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը և Ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել է, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված շտկված տեխնիկական բնութագրում 39-րդ չափաբաժնի մասով արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Հրավերի տեխ. բնութագիր	**Ընկերության կողմից ներկայացված տեխ. բնութագիր**
Սնուցումը եռաֆազ՝ 380 Վ	Սնուցումը միաֆազ՝ 220 Վ
Սառեցման արտադրողականությունը, ոչ պակաս քան 14 ԿՎՏ	Սառեցման արտադրողականությունը, 12.03 ԿՎՏ
Գազի տեսակը՝ R 410A	Գազի տեսակը՝ R 32
Աղմուկի մակարդակը՝ ոչ ավել քան 60Դբ/արտաքին բլոկ/	Աղմուկի մակարդակը՝ 65Դբ /արտաքին բլոկ/
Օգտագործվող խողովակները՝ ոչ պակաս	Օգտագործվող խողովակները՝ 75 մ

քան 80մ	

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության ուղղված 30.07.2021թ. թիվ 09/1148 գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Թեև «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրն ամբողջությամբ կրկնում էր հրավերի պահանջները, վերջինիս կողմից ներկայացված ապրանքային նշանը հավաստող պաշտոնական կայքի հղմամբ, այդ ապրանքի տեխնիկական բնութագրերը մի շարք բնութագրիչների մասով չեն համապատասխանում հրավերի պահանջներին»:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2021/212 ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Հարգելի պարոն Ներսիսյան եթե մենք մտադրություն ունենայինք դիտավորյալ խախտումների ապա կարող էինք նաև տրամադրել պահանջվող տեխնիկական պարամետրերին համապատասխան էլեկտրոնային կայքի հղում տենդերում հաղթող ճանաչվելու համար: Սակայն մենք բարձր ենք գնահատում հավասարության պայմանները, այդ իսկ պատճառով մեր կողմից տրամադրվող էլ. հասցեն ավելի ճշգրիտ էր քան սխալմամբ ներկայացված տեխնիկական բնութագիրը, որի համար հայցում ենք Ձեր ներողամտությունը և պարտավորվում այսուհետ ավելի հետևողական և ուշադիր լինել փաստաթղթերի լրացման ու տրամադրվող տեղեկատվության ճշտության վերաբերյալ»:

Եվ այսպես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների</u>***

<u>նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է հայտում բացակայող Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն որպես շտկում ներկայացված Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրվել է անհամապատասխանություն՝ Ընթացակարգի հրավերի 39-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի համար սահմանված տեխնիկական բնութագրի նկատմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-2021/11-4-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2021թ. թիվ 26/26-1/12560-2021 գրությամբ «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Բի Թու Բի Քոնեքշն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**